ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԵԾ ԳԻՏՆԱԿԱՆԸ, ԳՈՐԾԻՉԸ, ՔԱՂԱՔԱՑԻՆ

Աշոտ Հովհաննիսյանը ականավոր պեսական և կուսակցական գործիչ էր։ Հենց այն փաստը, որ Աշոտ Հովհաննիսյանը եղել է Սովետական Հայաստանի լուսավորության առաջին ժողովրդական կոմիսար արդեն ինքնին շատ բան է ասում։ Նա եղել է Հայաստանի և Անդրկովկասի Կենտրոնական գործադիր կոմիտեների, ինչպես և նրանց նախագահության անդամ, իսկ 1922—1927 թթ.՝ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար։ Ղեկավարել է ՀԿԿ չորս համագումարներ, մասնակցել Անդրկովկասյան կուսակցական կազմակերպությունների համագումարներին և ՍՄԿԿ XIII և XIV համագումարներին։ Պատմությունը չի մոռանա Աշոտ Հովհաննիսյանի ծառայությունները, որպես կուսակցական և պետական ականավոր գործչի։

Այսուհանդերձ նա մեր առաջ բարձրանում է իր ողջ հասակով որպես ականավոր հայ մարքսիստ-պատմաբան։ Իր «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» և «Նալբանդյանը և նրա ժամանակը» կապիտալ աշխատություններով Աշոտ Հովհաննիսյանը առհավետ կմնա այդ կոչման բարձրության վրա։ Պատմագիտությունը հարթ ու լայն պողոտա չէր, որով ընթացավ Աշոտ Հովհաննիսյանն իր հետազոտություններով։ Նա ձեռնարկեց հայ ժողովրդի պատմության այնպիսի դրվագների ուսումնասիրությունը, որին տակավին ձեռք չէր տվել ոչ մի պատմաբան։ Այսպես, «Դրվագներին» մեջ ամփոփված նյութերը ընդգրկում են հայ ազատագրական մտքի պատմության ուսումնասիրությունը՝ սկսած խոր միջնադարից մինչև XVIII դ. սկզբները։

Խորը պատկառանքի զգացումով ենք համակվում, երբ այդ աշխատությունը կարդալուց հետո ծանոթանում ենք աղբյուրների ցանկին, որ կան 240 ձեռագրեր, մեր մատենագիրների գրեթե բոլոր աշխատությունները (հայերեն, ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն և այլ լեզուներով) և նյութին վերաբերող հարյուրավոր հետազոտություններ։

Եթե անգամ հանգուցյալը միայն այս աշխատությունը թողած լիներ սերունդներին, նա կմտներ հայագիտության երախտավորների կաճառը։



Նրա երկրորդ կապիտալ աշխատությունը՝ «Նալբանդյանը և նրա ժամանակը» սովետահայ պատմագրության ակնառու նվաճումներից է։

Պատահական չէ Աշոտ Հովհաննիսյանի նախասիրությունը, ուսումնասիրել Միքայել Նալբանդյանի կյանքը, հեղափոխական գործունեությունը և գաղափարա-քաղաքական ժառանգությունը։ Եթե հայկական լիբերալիզմը լռելյայն էր անցնում Նալբանդյանի կողքից, իսկ՝ ազգայնական հոսանքներն ու կուսակցությունները խեղաթյուրում էին Նալբանդյանի քաղաքական և սոցիալական հավատամքը, ապա մարքսիստ պատմաբանների ջանքերով հեղափոխական-դեմոկրատ Նալբանդյանը կանգնեցվեց պատմական այն պատվանդանի վրա, որին արժանի էր։ «Նալբանդյանն առաջինն էր այն գործիչներից,— գր-

ռում է Աշոտ Հովհաննիսյանը,—որոնք կապեցին Հայաստանի ազգային ազատագրական հեռանկարը Արևելքի և Արևմուտքի հեղափոխական ըմբոստացումների և, առաջին հերթին, ռուս մեծ ժողովրդի գլխավորած հեղափոխական շարժումների հետ։

Աշոտ Հովհաննիսյանը օժտված էր մեծ գիտնականին հատուկ համեստությամբ, անմիջականությամբ, պարզությամբ ու պահանջկոտությամբ։ Անսխալական չէր նա։ Սակայն նրա վրիպումներն ու սխալները իր խոսքերով ասած՝ վարի դաշտում բուսած խոտաններ չէին։ Դրանք հատկանշական և ուշագրավ էին, իբրև պրպտող մտքի, հետազոտողի որոնումների արտահայտություն։ Եթե անգամ այդ թվացող կամ իրական սխալները պատմաբանների կողմից գիտական քննարկման ենթարկվեցին, դա կընպաստի մեր պատմագրության հետագա զարգացմանը։

Որպես պատմաբան, Աշոտ Հովհաննիսյանն ուներ իր ձեռագիրը և առանձնահատուկ ոճը։ Որպես մարքս-լենինյան մեթոդոլոգիայի աներեր հետևորդ նա պահանջում էր կոնկրետ պատմական մոտեցում հասարակական երևույթներին, նրանց ուսումնասիրել իրենց զարգացման մեջ։ Նա պահանջում էր ամենայն բարեխղճությամբ ուսումնասիրել փաստերը, բայց չզբաղվել փաստագրությամբ, այլ դրանք վերլուծելով բացահայտել պատմական պրոցեսի օրինաչափությունները։ Աշոտ Հովհաննիսյանը պատմաբան փիլիսոփա էր և փիլիսոփա պատմաբան։ Նա մի առիթով ասել է. «Լինում են կենդանի թաղվածներ և կան մեռելներ, որոնք ավելի կենդանի են և կենսունակ, քան շատերը նրանցից, որ տարտամ քայլերով քաշ են գալիս վերապրողների ետևից։ Կան հետնորդներ, որոնք երբեմն դարձած են դեպի նախնիքը։ Բայց լինում են նախնիք, որոնք երբեմն դարձած են դեպի հետնորդները»։ Վերջիններից էր ինքը՝ Ա. Գ. Հովհաննիսյանը։

Մենդյան 80-ամյակի կապակցությամբ Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի որոշմամբ գիտությունների ակադեմիային, մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղին հանձնարարված է ձեռնամուխ լինել կազմելու և հրատարակելու Աշոտ Հովհաննիսյանի գործերի ժողովածուն։

Այդ որոշման կատարումը արժանի հուշարձան կլինի մեծ երախտավորին։

Հավերժ հիշատակ կուսակցական և պետական գործչին ու ականավոր գիտնականին, կոմունիստական կուսակցության լենինյան գվարդիայի փայլուն ներկայացուցչին՝ Աշոտ Հովհաննիսյանին։

ԱՐՏՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

ՀԱՎԵՐԺ ՀԻՇԱՏԱԿ ԱՆԽՈՆՋ ԳԻՏՆԱԿԱՆԻՆ

Մահացավ հայ պատմագրության ու հասարակական-քաղաքական մտքի պատմության ամենախոշոր դեմքերից մեկը՝ Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանը։ Նրա բուռն ու բեղմնավոր կյանքը մի ամբողջ էպոխա է ընդգրկում։ Աշոտ Հովհաննիսյանը ծնվել է 1887 թ. հունիսի 17-ին Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում, որտեղ և ավարտել է տեղի ռեալական դպրոցը։ Նա իր հեղափոխական մկրտությունն է ստացել իր հայրենակից այնպիսի ականավոր լենինյանների շրջանում, ինչպիսիք էին Բոգդան Կնունյանցը, Ալեքսանդր Բեկզադյանը, Սմեակ Տեր-Գարրիելյանը, Վլադիսլավ Կասպարովը և ուրիշներ։ Դեռևս 1905 թ. Աշոտ Հովհաննիսյանը և Կասպարովը ծանոթանում են Լենինի «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատությանը։ Այդ նույն թվականին իր ընկերներ Հ. Գյուլիքևխյանի և Վ. Կասպարովի հետ Աշոտ Հովհաննիսյանը մասնակցում է աշակերտական հակացարական հուզումներին։

1906—1913 թթ. Ա. Հովհաննիսյանը մեկնում է արտասահման և սովորում Ենայի, ապա Հալլեի և Մյունխենի համալսարաններում։ Ավարտելով համալսարանը՝ Աշոտ Հովհաննիսյանը 1913 թ. հունվարին պաշտպանում է «Խրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը» դիսերտացիոն աշխատությունը (գրված գերմաներեն), որի համար նրան շնորհվում է փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան։

Ենայի համալսարանում 1906 թ. Աշոտ Հովհաննիսյանը մտնում է ՌՍԴԲԿ շարքերը։ 1907 թ. նա Հ. Գյուլիքևխյանի հետ Ապոլդա քաղաքում լսում է Ավգուստ Բեբելի կրակոտ ճառը Ռայխստագի ընտրությունների կապակցությամբ։ Վերադառնալով Հայրենիք՝ նա 1914—1917 թթ. դասավանդում է Էջմիածնի Գեորգյան ճեմարանում, որտեղ գաղափարական խոր ազդեցություն է թողնում ուսանող երիտասարդության վրա։ Այստեղ Աշոտ Հովհաննիսյանը Անաստաս Միկոյանի, Գեորգ Աթաբեկյանի հետ ակտիվ մասնակցություն է ունենում տեղական բոլշևիկյան կազմակերպության կյանքին, կապ պահպանում Երևանի կազմակերպության և նրա ճանաչված ղեկավար Արշավիր Մելիքյանի հետ։

1917 թ. Աշոտ Հովհաննիսյանը նորից հայ-